բաններում տեղաւորեն: Նմանապէս դէմ չէ նա այն բանին, որ իր հնագէտները ջարդուփը-չուր անեն այդ արձանների գլուխներն ու ոտները — ինչպէս որ դա իսկապէս պատահել է— արկղների մէջ աւելի յարմարօրէն տեղաւորել կարենալու եւ Պետերբուրգ ուղարկելու համար:

«Բայց, ռուսական հաւատապատումին (Katechisis) անհամապատասխան ռեւ ազգային յառաջդիմութիւն՝ փուշ է նրա աչքում: «Եթէ հայերը զարգանալ են ուզում, թող ռուսերէն սովորեն»,— ասում էր զօրավար Ս–ը, մոսկովեան ժողովրդական լուսաւորութեան վարիչներից մէկը:

«Սրանից արդէն պարզ է, որ Աբովեանը, հակառակ իր տոկունութեան եւ ընդունակութեան, սեփական ձգտումներով մէկտեղ անյաջողութեան պիտի մատնուէր Ռուսաստանում:

«Այն սակաւաթիւ տողերը, որ ես մտադիր էի որպէս հրաժեշտի խօսք ձօնել իմ հայ բարեկամին, անսպասելիօրէն երկարեցին ու մի ամբողջ գլուխ դարձան: Ես վախ չունիմ, սակայն, թէ դրանով դժկամակութիւն առաջացրած կը լինիմ իմ գերման ընթերցողի մէջ: Աբովեանը, որ այնչափ նպաստել է գերման անունը հեռաւոր Արեւելքում պատուի եւ յարգանքի հասցնելու գործին, արժանի է, որ իր սեփական անունն էլ Գերմանիայում պատուի ու յարգանքի արժանանայ»:

* * *

Ռուս վարիչների՝ հանդէպ հայ–ազգային մշակոյթի ու լեզուի ցոյց տուած այլամերժ քաղաքականութիւնը իր «Կովկասի ժողովուրդները» աշխատութեան մէջ եւս (էջ 157) Բոդենշտէդտ հետեւեալ տողերով է խարանում.—

«Ժողովրդական կրթութեան պատկերը (հայոց մէջ) դժբախտաբար շատ ցաւալի է ռուս վարչութեան ներքոյ: Եւ այս՝ հակառակ այն բանի, որ լուսամիտ հայ անհատներ, եւ մանաւանդ ազնիւ, ջանասէր Աբովեանը, շատ են նպաստել իրենց հայրենակիցների զարգացման գործին: Այդպիսի մարդիկ առաւել եւս արժանի են հանրային գնահատութեան, որ նրանց ջանքերը Ռուսաստանի կողմից ըստ ամենայնի կասեցւում են: Ռուս կառավարութիւնը ոչ ընդունակութիւն ունի, ոչ էլ կամք՝ մի ժողովուրդի մտաւոր պահանջներին ընդառաջ երթալու: Թէ՛ Եւրոպայում եւ թէ՛ Ասիայում նա մէկ կէտ–նպատակի է ձգտում — կամազուրկ ստրուկներ դարձնել իր հպատակներին»:

Իր «Ցուշեր»ի մէջ եւս (Ա. 297–299), որ լոյս են տեսել հեղինակի մահուանից մի քանի տարի առաջ միայն, 1888–ին, ասել է՝ Հայաստան այցելած օրերից ամբողջ 44 տարիներ անց, Բոդենշտէդտ վերստին ու սիրով անդրադառնում է իր «ազնիւ հայ բարեկամին», Աբովեանին, ինչպէս եւ նրա գործին:

Այդտեղ նա յիշատակում է, որ Երեւանից Թիֆլիս վերադարձի ճամբան բռնելով, Բոդենշտէդտ եւ Ռոդէն, հետները տարել են ահագին թուով ձեռագիր «նիւթեր», որոնց թւում եւ «հայ ու թաթար ժողովրդական երգերի մի ժողովածու, որ ես պարտական եմ ազնիւ Աբովեանին»:

Թէեւ Բ–ի «Ցուշեր»ը Աբովեանի կեանքի մասին արդէն իսկ հաղորդածների վրայ շատ նոր գծեր չեն աւելացնում, բայց եւ այնպէս ամփոփենք այդ հատուածը եւս, ամբողջացնելու համար Բ–ից ստացած մեր բոլոր տեղեկութիւնները Աբովեանի մասին:

Այստեղ եւս Բոդենշտէդտ կրկնում է, որ Աբովեան նիւթական միջոցներից զուրկ է եղել, որ նա կրօնաւոր դառնալու նպատակով էջմիածնի վանքն է մտել: Պարրոտի ճամբորդութիւնը Հայաստան յիշատակելով՝ Բ. ասում է, թէ նա, Պարրոտ, Մասիս սարը բարձրանալու համար սկզբում չէ կարողացել առաջնորդ ճարել այն պատճառով, որ հայ ժողովուրդի մէջ նման մի ձեռնարկութիւն համարուել է մեղսական:

Եւ սակայն Աբովեան համամիտ չլինելով «հոգեւորականութեան կողմից սնուող այն ցնդաբանութեան, թէ մարդկային ոտք չպիտի համարձակուի կոխել սուրբ լերան կատարը, որի վրայ Նոյեան տապանն է հանդչում», «սիրով յայտնել է իր պատրաստակամութիւնը Պարրոտին՝ ուղեկցելու նրան դէպի Մասիսի գագաթը: Դրա համար հարկաւոր է եղել նախապէս վանքի թոյլտուութիւնը առնել:

«Պարրոտի սրտովն է լինում երիտասարդ, խոհուն Աբովեանը, որի առաջնորդութեան շնորհիւ էլ նա ստանում է առաջին անգամ Արարատի գագաթը բարձրացողի հռչակը»: Նա,